



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. /374281/ 2 25 22

« 02 » հոկտեմբեր 2023թ.

N 01/15/6725-2023

**«ՀԵՏԶ ՄԵԴԻԱ ԳՈՐԾԱՐԱՆ»-Ի ՈՒՍԱՆՈՂ
ԼՐԱԳՐՈՂ ԺԱՆՆԱ ԲԵՔԻՐՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին Բեքիրյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին ուղղված Ձեր հարցման (մուտքի ամսաթիվ՝ 26.09.2023թ.)՝ հայտնում ենք, որ պահաջվող տեղեկատվության տնօրինող ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը չի հանդիսանում: Արցախից տեղահանվածների հաշվառմամբ զբաղվում է ՀՀ Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը, իսկ խնդիրները լուծելու նախնական քայլը հումանիտար կայանում սոցիալական աշխատողների կողմից քաղաքացու կարիքների գնահատումն է, համաձայն որի բավարարվում են առկա կարիքները՝ կացարան, սնունդ, հագուստ, այլ անհրաժեշտ պարագաներ: Բոլոր սոցիալական ծրագրերն իրականացվում են ՀՀ կառավարության, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Տվյալների հավաքագրումը ներկայումս կրում է շարունակական բնույթ, այն ամփոփելուց հետո հասանելի կլինի վերը նշված պետական մարմինների կողմից գործարկվող պաշտոնական կայքերում:

10/2/2023

X *Gr. Grigoryan*

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ն. Մաղաքյան, Հեռ. (0281) 2 55 95